

Թիւնները անհամապատասխան են իր հասկացողութեան. յետոյ հասարակական անարդարութիւնների դէմ ըմբոստ, իբրեւ ազնիւ սիրտ ունեցող, նա չի ճնշում սակայն իր ծերունի հօրը համարեա հարուածել և աղքատ, խղճալի տունը կողոպտել: Նա իսկապէս մի շարլատան է, որից հեղինակը անօգուտ տեղը փորձում է մի մորալիստ ստեղծել: Հիմնովին սխալ է սափրիչ Մինասին յատկացրած դերը, հեղինակը միանգամայն թիւրիմացութեան մէջ է: Ժողովրդական դալլաք-բժիշկները մեծաւ մասամբ խորամանկ, խաբեբայ, շահախնդիր արարածներ են: Այդպիսի մարդիկ չէին կարող այն աստիճան անշահախնդրութիւն ցոյց տալ, որ իբր թէ բժշկէին ձրիապէս: Եւ յետոյ՝ ամենից տարօրինակը—այդ սափրիչ՝ Մինասը վեհանձնօրէն յանձն է առնում ամուսնանալ Մարթայի հետ նրա խայտառակութիւնը ծածկելու, նրա հոգին փրկելու համար: Դա անկարելի է, երբէք մի ժողովրդի մարդ, մի սափրիչ՝ գաղափարի, պատուի հասկացողութեան այդ բարձրութեան հասնել չէր կարող: Աւելի ճիշտ, աւելի հասկանալի կը լինէր, եթէ հեղինակը նրա տեղ դրած լինէր մի ուսուցիչ, որոնցից մի ժամանակ քիչ չը կային մեր գիւղերում և քաղաքներում. թէ չէ մի սափրիչ-բժիշկ... Լաւ է և ճիշտ է ըմբռնուած պարզ, ամօթխած, միամիտ և խաբուող Մարթայի տիպը: Բոլորովին իրական է և Սերորի վրէժխնդիր լինելու ցանկութիւնը. որչափ և ընկած լինէր նա, այդ Սերորը, քրոջ պատուի համար մահ էլ յանձն կ'առնէր: Վատ չէ նաև Ներսէսը, աշխատաւոր, հիւանդոտ երիտասարդը:

Յուսով ենք, որ հեղինակը կը կարողանայ թերութիւններն ուղղել և այս գործը հայ բեմի վրայ պահել:

Խաղը լաւ անցաւ:

\*  
\* \*

Նոյեմբերի 13-ին խաղացուած «Բազէներ և Ագուսներ»-ի (հեղ. Սումբատովի) մասին երկարօրէն խօսուած է «Մուրճ»-ում անցեալ տարի:

Ա.

## II Արաքսեանի ժողովրդական թատրոնը Հալաբարում

Հալաբարի այժմեան ժողովրդական թատրոնը, որ գլուխ է եկել պ. Արաքսեանի եռանդուն ջանքերով, Թիֆլիզում միակն է՝ կարելի է ասել՝ իր տեսակի մէջ: Իբրև ժողովրդական թա-

տրոն՝ նա ունի շատ յարմարութիւններ. գտնուում է յարմար տեղ, գները բաւական մատչելի են, ունի բեմական սարքուկարգ- Գները, որ առաջ սկսած երկու ընթացք մինչև յիսուն կոպէկի էին հասնում երեկոները և յիսուն կոպէկից մինչև տաս կոպէկի՝ ցերեկները, այժմ աւելի են էժանացրուած—երեկոյեան 1 ր. 50 կոպէկից մինչև 30 կոպէկ, իսկ ցերեկները 30 կոպէկից մինչև 10 կոպէկ: Ծախքերն ի նկատի առած՝ այդ գները կարելի է համարել միմիայն: Թատրոնն ունի ֆոէ երկրորդ յարկում, բեմի կողքին, իսկ առաջին յարկում բուֆետ և երաժշտութեան համար ճաշակաւոր ձևով շինուած քիոսկ: Միայն չէ պահպանուում այդ տեղերի մաքրութիւնը. թատրոն յաճախում է հասարակ դասակարգը, կեղտոտ ոտներով փչացնում յատակները. թէև պատերից կախուած են ուսեսերէն մակագրութիւններ՝ «խնդրում են չը ծխել և հանել գլխարկները», բայց ամեն տեղ ծխում են, գլանակները գցում յատակին... Շատերն արդարանում են նրանով, որ ուսեսերէն չը գիտեն, հետևապէս և՛ մակագրութիւնները չեն կարդացել:

Դեռ ևս հասարակութիւնը իրան կարգին պահել չը գիտէ, մանաւանդ յետին կարգերում. իրանց տեղերը չեն նստում. տեսնում ես, որ առաջին գործողութեան ժամանակ առաջին կարգերը դատարկ են, երկրորդ գործողութեան ժամանակ լցուեցին, և հակառակը՝ վերջին կարգերը դատարկուեցին: Աղմուկ են բարձրացնում, նոյնիսկ ներկայացման ընթացքում շշուկները և մինչև անգամ սրախօս բացազանչութիւններն անպակաս են:

Հանդիսատեսներն իր ժամանակին չեն նստում իրանց տեղերը. շատ անգամ վարագոյրը բարձրանում է, խաղն սկսւում, և ապա միայն հասարակութիւնը խոնուելով, իրար հըր- հըրելով, աղմուկ անելով ներս է խուժում դահլիճը և խանգարում նստածներին լսելու: Օվացիաները կատարւում են բաւական կուպիտ ձևով. ցոռոցներին վերջ չի լինում կարծես, գլխարկներ են նետում բեմը:

Կիրակի օրերը ժողովուրդը շատ է լինում, համարեա միշտ լցւում է թատրոնը, իսկ լի օրերը պակաս:

Կանանց սեռը եթէ կատարելապէս չէ բացակայում, գոնէ շատ չնչին թիւ է ներկայացնում:

Դերասանական խումբը բաղկացած է՝ չորս դերասանից, երկու դերասանուհուց, մնացածը սիրողներ են: Փոքր բիւջէն թոյլ չէ տալիս աւելի շատ դերասաններ վարձել, իսկ Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը՝ չը գիտենք ինչու՝ արգելում է իր դերասաններին մասնակցել ժողովրդական թատրոնի ներկայացումներին:

Արաքսեանի թատրոնում ներկայացումներն սկսուել են անպտեմբերի 28-ից, և ներկայացուել են կարգով հետևեալ պիեսները. «Պէպօ» Սուրուկեանի, «Կրիշնսկու հարսանիքը» Սուխով Կորելլինի, «Բաղդասար աղբար» Պարոնեանի, «Ոճրագործի ընտանիքը» Զիակոմետտիի, «Երկրորդ երիտասարդութիւն» (երկու անգամ) Նևեթինի, «Արդիւնաւոր պաշտօն» Օստրովսկիյի, «Կոյր» Թարգմ. Ֆրանսերէնից, «Ասլան Բալասի» և «Ղաքարաղի աստղագէտը» փոխադրութիւններ Սարգսեանի:

Մենք ներկայ ենք եղել սկսած հոկտեմբերի 26-ից, ուստի նախընթաց ներկայացումների մասին չենք կարող խօսել:

Հոկտեմբերի 26-ին խաղում էին Ֆրանսուա Կոպպէի «Թագի համար» տրագեդիան:

Որքան նպատակյարմար և աջող էր այդ պիեսի ընտրութիւնը ժողովրդական թատրոնի համար, այնքան անաջող էր նրա խաղը: Դերակատարներն՝ աննշան բացառութեամբ՝ կարծես խօսք էին տուել չը գիտենալ իրանց դերերը: Չափազանց ծանր տպաւորութիւն էր թողնում հասարակութեան վրայ, երբ դերակատարը կանգ էր առնում, տիրում էր բաւական երկար պաուզա, յուշարարը մի քանի անգամ կրկնում էր խօսքերը և այն էլ այնքան բարձր, որ հանդիսատեսները կարող էին կրկնել, այնպէս որ յուշարարի բերանից լսելով նախօրօք այն, ինչ պէտք է մեզ ասէ դերասանը, մենք համարեալ թէ կարիք չէինք զգում նոյն բանի կրկնութիւնը լսելու դերասանից:

Դերասանական յարմար ուժերի պակասութեան պատճառով պ. Վրոյրը յանձն էր առել մի այնպիսի դեր (իշխան Միքայէլ Բրանկովի), որ ոչ մի առընչութիւն չ'ունէր իր ամպլուայի հետ:

Պ. Ամօ-Պարագեանը (Միքայէլ Բրանկովիի որդի Կոստանդին, որին՝ չը գիտենք ի՞նչ հիման վրայ՝ տիկին Ջարէլն առնանում էր Կանստանտին) վերցրել էր կեղծ տոն. բէալականութեան ոչ մի նշոյլ չը կար նրա լալկան ճարտասանութեան մէջ:

Տիկին Արաքսեանը վատ գիտէր իր դերը, ուստի և նրա խաղը թոյլ էր, չը նայած որ ստանձնած դերը (Միլիցա) շատ համապատասխան էր իր տեմպերամենտին:

Տիկին Ջարէլն այնպիսի դերի համար, որպիսին է փառասէր իշխանուհի Բագրիլիդը, միանգամայն անհամապատասխան

էր նրա հասակը, ձայնը, առողջանութիւնը, ձեւերը շատ հեռու էին Բագիրիդին արտայայտելու կարողութիւնից:

Այդ երեկոյեան խաղին մասնակցող սիրողներէց չը նկատեցինք և ոչ մէկին, որի վրայ կարելի լինէր յոյս դնել, թէ կարող է դերասան դառնալ: Գուցէ պատճառը մասամբ նրանց դերերի աննշան լինելն էր:

Միակ մարդը, որ այդ երեկոյ մեծ աջողութեամբ տարաւ իր դերը (Ստեփան եպիսկոպոս, Բաղկանների թագաւոր), այդ երիտասարդ դերասան Բերոյեանն էր, սակայն նրա հետ էլ փորձանք պատահեց.—յուշարարը վարագոյրն իջեցրեց այն ժամանակ, երբ դեռ Բաղկանների թագաւորը չէր արտասանել իր մոնոլոգը, որ նրա դերի ամենաէական մասն է, որտեղ նա զինւորներին պատերազմի հրաւիրելիս՝ ցոյց է տալիս իր՝ ծերունիի՝ կորովի սիրտն ու հոգին:

Հոկտ. 29-ին խաղացին Յ. Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկաններ» կոմեդիան և «Տիկինը ննջում է» վոդվիլը, թարգմ. Թուրեանի:

«Մեծապատիւ մուրացկաններ»-ը շատ էինք տեսել բեմի վրայ, բայց այդչափ խայտառակ անսամբը՝ երբէք: Երեւակայեցէք մի խումբ մարդիկ, որոնք չը գիտեն, թէ ինչ պէտք է անեն, ինչ պէտք է ասեն և տակից-գլխից դուրս են տալիս, ով ինչ հասցնում է, ինչ բարբառով կարող է—ռուսահայ, տաճկահայ կամ գաւառաբարբառով: Սիրողներին անփորձութիւնն՝ իհարկէ՝ ներելի է, բայց հօ չէ կարելի ամեն-մի անհամութիւն տեսնել բեմի վրայ և արդարաւալ միմիայն նրանով, որ սիրող ես: Այդ պիեսին անծանօթ հայը, լինէր նա նոյնիսկ հմուտ հայ-կաբան բառի ընդարձակ նշանակութեամբ, չէր կարող գուշակել, թէ Պարոնեանն ինչ բարբառով է գրած եղել իր երկը: Մինչն անգամ Վրոյրի պէս դերասանը, որը՝ բացի այն՝ որ ինքը պոլսեցի է, այլև շատ անգամ է խաղացել իր դերը, էլի տեղտեղ համեմուտ էր ռուսահայ բարբառով: Իսկ մի պարոն, որ կատարում էր բժշկի դերը, աւելի դիւրին ճանապարհն էր գտել և ուղղակի խօսում էր անխառն ռուսահայ լեզուով. միայն վերջերում էլի իրան դաւաճանեց և մի քանի բառերի ուղղագրութիւն տաճկահայ դարձրեց: Ակցենտի մասին էլ չենք խօսում. բեմում լսում էր Թիֆլիզի, Շուլաւերի և այլ գաւառաբարբառների ակցենտ, բայց ոչ տաճկահայ, եթէ Վրոյրին չը հաշուենք: «Մեծապատիւ մուրացկաններ»-ի հումորի համն ու հոտի մի մասն էլ—եթէ չ'ասենք՝ մեծ մասը—կայանում է նրա

գողարիկ լեզուում: փշացաւ այդ լեզուն, փշացաւ և՛ ամբողջ տպաւորութիւնը:

Ներկայացմանը մասնակցում էին միմիայն երկու դերասան—պ. Վրոյր և տ. Զաքէլ—մնացած ութ հոգին սիրողներ էին: Սիրողներէց և ոչ մէկն իր դերը չը գիտէր, այնպէս որ Վրոյրը յաճախ ստիպուած էր լինում իր կողմնակներին օգնելու նպատակով յանպատրաստից հազար ու մի յաւելացումներ անել, երբեմն՝ իհարկէ՝ անտեղի: Բայց և այնպէս պ. Վրոյրը մեծ քաջութիւն ցոյց տուաւ՝ կարողանալով այդպիսի ծանր, աննպաստ հանգամանքներում ոչ միայն դերը չը փշացնել, այլև հիանալի խաղալ, միայն մերթ-մերթ շարժի մէջ ընկնելով:

Վատ չէր և՛ տիկին Զաքէլը Շողակաթի դերում:

«Տիկինը ննջում է» կամ «Ծերուկը կատակ է անում» վողբվելն անցաւ աշխոյժ: Այդտեղ մասնակցում էին բացի պ. Վրոյրից և՛ մի սիրող (պ. Աղամիրեան) ու մի կին-սիրող (օր. Քնարիկ):

Վրոյրն այդ դերում յաճախ է բեմ դուրս եկել և միշտ փայլել է: Պ. Աղամիրեանը, որ կատարում էր ժողեֆի դերը, իր խաղով ապացուցեց, որ որոշ չափով տարբերուում է միւս սիրողներէց դէպի լաւը:

Օրիորդ Քնարիկը... չը նայած իր բոլորովին նոր բեմ դուրս գալուն և փոքր տարիքին, իր դերը խաղաց փորձուած դերասանուհուց ոչ վատ: Նա բեմի վրայ իրան զգում էր միանգամայն ազատ, կարծես տեսած, ապրած լինէր այն կեանքը, ինչ որ արտայայտում էր: Միայն սաստիկ արագ է խօսում օրիորդը և չափազանց է ոգևորւում. այդ բանը նկատւում էր և՛ «Թագի համար»-ի մէջ իր փոքրիկ դերը կատարելիս: Նրան պակասում է և՛ միմիկայի տեղին գործադրութիւն:

Նոյեմբերի 2-ին ներկայացուցին՝ ցերեկը—Յ. Պարոնեանի «Բաղդասար աղբար» կոմեդիան, երեկոյեան—Գալֆայեանի «Արշակ Բ.» ողբերգութիւնը:

«Բաղդասար Աղբար»-ի ընդհանուր անսամբլը աջող էր: Լեզուն աւելի քիչ էին նահատակում. թոյլ էին միայն թաղական խորհրդի անդամները: Սիրողներէց մի քանիսը նախադասութեան վերջը շատ ցածր էին արտասանում, այնպէս որ հասարակութեանը լսելի չէր լինում. ամենից շատ մեղանջում էր պ. Արմէնը—փաստանի դերում:

«Արշակ Բ.»-ի ներկայացմանը մասնակցում էր և՛ պ.

Արեւեանը. տաղանդաւոր դերասանն իր զգացուած և մտածած խաղով կարողացաւ ծածկել պիեսի լուրջ թերութիւնները:

Լաւ կը լինէր, որ Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը թոյլ տար իր միւս դերասաններին ևս երբեմն-երբեմն մասնակցելու ժողովրդական ներկայացումներին:

Ալանողանի դերում մեծ աշողութիւն ունեցաւ պ. Բերոյեանը:

Սիրողներից աչքի ընկաւ պ. Քոչարեանը, բայց նրա ոգևորութեան չափազանցութիւնը միանգամայն անտեղի էր:

Նոյեմբերի 9-ին, առաւօտեան—կրկնուեց «Արշակ Բ.»-ը:

Այս անգամ Արշակի դերը կատարում էր Ամօ-Պարպեանը: Նրա ձայնը սեղմուած էր, բառերն արտասանում էր հոնտորական ձևով, վանկ-վանկ, չը գիտենք ինչո՞ւ՝ աւելացնում էր ը և ն տառերը, օրինակ՝ «հինքը տարի» (հինգ տարի), «Արշակն արքայ մեծն թագաւոր», «ար-ը-ծիւ-ը» (արծիւ) ևայլն:

Բանտապետի որդի Միհրանի դերը կատարում էր օրիորդ Քնարիկը, բայց... դժբախտաբար շատ վատ... Փորձուած ընթիս-սեորի ղեկավարութեան մեծ կարիք ունի նա:

Նոյն օրը երեկոյեան խաղացուեց Շիլլերի «Աւագակներ» դրաման: Այդ ներկայացումը հետաքրքիր էր նրանով, որ պ. Վրոյրը ստանձնել էր Ֆրանց Մոորի դերը: Վրոյրը թէև չը փչացրեց իր դերը, նոյնիսկ տեղ-տեղ (ինչպէս օրինակ՝ հինգերորդ գործողութեան մէջ) նա լաւ խաղաց, բայց և այնպէս ընդհանուր առմամբ նրա խաղը կարելի է միայն բաւարար համարել. կոմիկական նոտան տեղ-տեղ ակամայից հնչում էր նրա դրամայի մէջ:

Երեկոյի հերոսը պ. Արեւեանն էր. նա ուղղակի ֆուրոր արաւ. ամէն ինչ բնական էր նրանում, հիմնալի էր, մանաւանդ պատերի առաջ խօսելիս և թշուառ հօրը հանդիպած ժամանակ:

Ծերունի Մոորի դերով պ. Բերոյեանն ապացուցեց, որ արտիստի աչքի ընկնող շնորհք ունի: Ցանկալի է, որ այդ ընդունակ դերասանին այլևս չը ծանրաբեռնէին իրան անհամապատասխան դերերով, մանաւանդ այժմ, որպէսզի նա կարող լինի իր վրայ կանոնաւորապէս աշխատել:

Տիկին Զաբէլին Ամալիայի դերում կարող էր փոխարինել տիկին Արաքսեանը...

Նոյեմբերի 14-ին, խաղացին Ալիխանեանի «Երուանդ Բ.» պատմական ողբերգութիւնը և Սարգսրեանի «Օրթաճալի քէֆը» վոդվիլը:

Ահա մի պիես («Երուանդ Բ.»), որ վաղուց պէտք է ար-խան ընկած լինէր: Քստմենի դաւեր, սարսուռ ազդող ըս-պանութիւններ, անվերջ պատահականութիւններ, անբնական փոփոխութիւններ մի գրութիւնից միւսը, թքով կպցրած գոր-ծողութիւններ, — ահա այդ շփոթի բոլոր արժանիքները:

Թատրոնական գործը հիմնաւոր դարձնելու պայմաններից մէկն էլ կազմ ընպերտուար ունենալն է. բայց՝ ինչպէս երե-ւում է, պ. Արաքսեանի թատրոնը չ'ունի պատրաստի ընպեր-տուար, որից առաջ է գալիս այն, որ «Երուանդ Բ.»-ի պէս արսուրդը խաղացում է բեմի վրայ:

Դերասանների խաղի մասին հարկ չը կայ խօսելու, որով-հետեւ խաղալու ոչինչ չը կար այդ «ողբերգութեան» մէջ:

«Օրթաճալի քէֆը» տանելի էր. շատ լաւ էր Աւետիքի դերում պ. Ղուչեանը:

Գրիմի և շորերի նկատմամբ մեծ անփութութիւն է ե-րևում ընդհանրապէս: Երուանդ Բ.-ը հագել էր մեր դարի ամե-նավերջին տարազի մուճակներ: Նրա զգեստը, որքան էլ փայ-լում էր... ժանեակներով (!), այնուամենայնիւ չէր կարող գոյու-թիւն ունենալ հայ Երուանդ արքայի համար:

Նոյեմբերի 16-ին խաղացուցին՝ ցերեկը — «Եսթեր» դրա-ման, թարգմ. Կ. Մարտիրոսեանի, երեկոյեան — Շեքսպիրի «Օ-թելլօ» տրագեդիան:

«Եսթեր» դրաման շօշափում է մի ծանր հարց, այն է՝ որ հրէաներին մեղադրում են, թէ նրանք քրիստոնեայի արիւն են գործածում իրանց «մացա»-ի (հաղորդութեան հացի) մէջ:

Իսրայէլ հրէայ ընտանիքը, որ բաղկացած է հօրից, որ-դուց և վերջինիս աղջիկ Եսթերից, Փրանկֆուրտի հարուստ ազ-նիւ ընտանիքներից մէկն է: Իսրայէլ հայրը մոլիռանդ հրէայ է, որդին աւելի լայն հայեացքների տէր է օտարների վերաբերմամբ, բայց հրէականութեան և նրա կրօնի ու սովորութիւնների բա-ռացի կատարողութեան հարցում նոյնպէս խստապահանջ: Իս-րայէլ որդու աղջիկ Եսթերը հակումն ունի դէպի քրիստոնէու-թիւնը: Մի հրէայ, Զողիկ անունով, որ մի քանի ընկերների հետ միասին աւազակութեամբ է պարապում, եօթ տարով մը-տել է ծառայութեան Իսրայէլների մօտ՝ Եսթերին կին առնե-լու պայմանով: Այդ ծառայի աւազակ լինելը յայտնում է, և

Իսրայէլները հրաժարուում են տալ իրանց աղջկան այդ աւագակին. ուստի և ծառան քրիստոնէութիւն ընդունելով՝ ամբաստանում իր տէրերին, իբր թէ նրանք սպանել են մի քրիստոնեայ երեխայի՝ նրա արինը սրբազան հացի մէջ գործածելու նպատակով: Դատաւորների խիստ վերաբերմունքը և ծառայի ստոր բամբասանքը կտրում են ծերունի Իսրայէլի կեանքի թելը, և նա մեռած ընկնում է դատարանում: Իսրայէլ որդուն ենթարկում են ամենախիստ տանջանքների և վերջապէս որոշում են այրել խարոյկի մէջ: Այդ իմանում է Դագորեր անունով մի ասպետ, որը սիրելիս է լինում Եսթերին փոխադարձ սիրով, և հետամուտ է լինում Ձողիկին: Բանից դուրս է գալիս, որ Իսրայէլ որդին Դագորերի քրոջ խնդրանքով վերցըրած է լինում իր մօտ նրա—Դագորերի քրոջ—ապօրինի զաւակին պահելու, Ձողիկը գողանում է այդ երեխային, բայց Դագորերը գտնում է նրան, և ամեն ինչ պարզւում է, դատարանն անմեղ է ճանաչում Իսրայէլներին: Երբ Իսրայէլ որդին բանտից և մահից ազատուած՝ գալիս է Դագորերին յայտնելու իր երախտագիտական զգացմունքը, Դագորերը խնդրում է նրանից Եսթերի ձեռքը: Երախտագէտ, բայց և մոլեռանդ հրէայ Իսրայէլը, որ պատրաստ էր ամեն ինչ տալու իր փրկչին, այդտեղ վարանում է և կանչելով աղջկան՝ առաջարկում է նրան ընտրութիւն անել իր և Դագորերի մէջ. եթէ նա կը գնայ Դագորերին կնութեան, ապա խզւում է ամեն մի կապ նրա և հօր մէջ թէ՛ այս և թէ՛ հանդերձեալ կեանքում: Եսթերը կարճ տատանումներից յետոյ ընտրում է իր սիրեցեալին, սակայն մի վայրկեան չ'անցած՝ ծնողասիրութեան զգացմունքը գերակշռում է, և աղջիկը՝ «Բայց նա իմ հայրն է» գոչելով՝ նետուում է հօր գիրկը:

Գրուածքը գեղարուեստական արժանիքներ չ'ունի, բայց զուրկ չէ հետաքրքրութիւնից և էֆֆեկտներից:

Պիեսի հերոսը—Սարազեանը (Դագորեր) չափազանց սառը սիրահար էր: Բնականութեան ստուեր անգամ չը կար նրա խաղի մէջ:

Ձարմանալի է, որ I դարի հայ թագաւոր Երուանդ Բ.-ը և XV դարի գերմանացի ասպետը հագնւում էին միատեսակ... բացի գլխարկներից...

Տիկին Արաքսեանը սիրուն Եսթեր էր, սակայն վերջին տեսարանը թոյլ տարաւ: Պատետիկ տեղերում տիկինն ընդհանրապէս ազատութիւն չէ տալիս զգացմունքներին:

Շատ լաւ խաղացին իրանց դերերը պ. Բերոյեանը (Իսրայէլ որդի) և օր. Քնարիկը (Մատիլդա, համը աղջիկ):

Ներկայացումը փոխանակ ժամի 11-ին սկսուելու, ինչպէս յայտարարուած էր, սկսուեց ժամի 12-ին մօտ և տեղեց մինչև 3<sup>1</sup>/<sub>4</sub>-ը: Պէտք է նկատել, որ ներկայացումները երբեք ժամանակին չեն սկսուում:

Թատրոնը լաւ չեն տաքացնում:

Երեկոյեան խաղացուեց «Օթելլօ»-ն: Օթելլօի դերը կատարում էր պ. Աբելեանը: Նա նման էր մի հսկայի, որ իր վրայ էր առել մի խումբ թոյլերի պաշտպանութիւնը, և որքան որ այդ անգօրները փչացնում էին գործը, այնքան այդ մենակ հսկան աւելի շատ ճիգ էր գործ դնում նորից շտկելու: Աբելեանի աճող տաղանդի մասին չենք խօսում, միայն չենք կարող չ'արտայայտել մեր զարմանքը՝ նրա մէջ կատարուած ահագին փոփոխութեան վրայ: Ուրիշ անգամներ առիթ ենք ունեցել տեսնելու նրան Օթելլօի դերում, բայց այս անգամ մեր տեսած Օթելլօն գլխովին բարձր էր առաջուայ տեսածներէից. մանաւանդ նրա ծերակոյտի առաջ՝ իր կնոջով սքանչանալը—զարմանալի է:

Պ. Պարազեանն\* (Շագօ) ինչպէս երևում է՝ հետևող չէ այն առածին, որ ասում է. «Լաւ է լինել գիւղում առաջինը, քան քաղաքում՝ վերջինը». ընդհակառակն՝ նա գերադասում է լինել քաղաքում վերջինը, քան գիւղում առաջինը, ուստի և միշտ ընտրում է առաջնակարգ դեր՝ կարծելով, թէ դրանում է կայանում նրա փրկութիւնը...

Շատ տարիներ առաջ մի պարօն—Հէքլմեան—բարի զգացմունքից դրդուած՝ մտածել է հայագգի դրամատուրգ լինել և գտել է հնարը. վերցրել, մի քանի բարձրագույն, ճոճոսն ֆրագներ է դրել V դարի հայ նախարարների բերանում, երեք անգամ վարագոյրն իջեցրել իւրաքանչիւր 10 ըոպէից յետոյ, վերջն էլ նախարարներից մէկին սպանել նրա որդու ձեռքով, և այդ բոլորից աշխարհ է եկել մի դրամա (sic!), որը կնքելով՝ անունը դրել է «Սամէլ»: Չը նայած որ այդ «Սամէլը» հէնց զառամած էր ծնուել, բայց բարեսիրտ պարօն Արաքսեանը ցաւակցելով նրան՝ կամեցաւ նոյեմբերի 21-ին երիտասարդացնել, սակայն յամառ ծերութիւնը չ'ենթարկուեց մարդկային ցանկութեան և մեռաւ՝ աղաչելով, որ միւս անգամ մարդիկ չը խիզախեն խռովել նրա անդրշիրմեան հանգիստը:

Վերջապէս բաւական է հասարակութիւնը կերակրել այդպիսի անհամ հանաքներով: Փաստաբանել, թէ հասարակութիւնն այդպիսի պիեսներ է պահանջում, այդ պատճառով էք

տալիս նրան «Սամէլ»-ներ, «Երուանդ Բ.»-ներ, միանգամայն դատապարտելի է. տհաս ժողովուրդը շատ բան կարող է պահանջել, բայց ոչ թէ ժողովուրդը պէտք է ինքն իրան կրթէ թատրոնում, այլ թատրոնը պէտք է կրթէ ժողովրդին: Միթէ կարգին պիեսներ չեն ճարւում. գուցէ կ'ասեն, թէ դերասաններ չ'ունի ժողովրդական թատրոնը, այդ պատճառով չեն խաղացւում շատ նպատակայարմար գործեր. բայց մի բեմի վրայ եթէ խաղացւում է «Օթելլո», աւելի հեշտութեամբ կարող են խաղացուել Օստրովսկիյի պիեսները, Մոլիերի կոմեդիաները, մանաւանդ որ պ. Վրոյրն այդ կոմեդիաներում ունի աջողակ դերեր: Գուցէ պատճառաբանեն, թէ այդ պիեսները կարգին մուտք չեն տալիս. բայց միայն մուտքի մասին մտածել՝ աւելի քան պախարակելի է, և յետոյ՝ համոզուած ենք, որ հէնց սիրած «Սամէլ»-ն էլ մուտք չէր տալ, եթէ այդ երեկոյ խաղալիս չը լինէր պ. Արեւեանը, և չը լինէին թատրոնի ղեկավարին յայտնի մի քանի նպաստող հանգամանքներ...

Վերջում խաղացուած «Կըրթ-Կըրթ» վողդվիլն անցաւ շատ աշխոյժ: Թուրքերէն լեզուն աղաւաղուեց սակայն: Շատ լաւ կլեկչի-Պօղոս էր պ. Ղուշչեանը:

Ա.Թ.